բ. պետական պահուստի նյութական արժեքների անվանացանկի, ինչպես նաև կուտակման նորմերի մշակումը և Արցախի Հանրապետության կառավարության հաստատմանը ներկայացնելը,

գ. պետական պահուստում նյութական արժեքների ձևավորման (կուտակման, թարմացման, ապամարագրման, փոխառման, փոխարինման) պետական ծրագրերի նախագծերի մշակումը և դրանք սահմանված կարգով Արցախի Հանրապետության կառավարության հաստատմանը ներկայացնելը,

դ. պետական պահուստի նյութական արժեքների տեղաբաշխման քաղաքականության մշակման համակարգումը,

ե. պետական պահուստի համակարգի կառավարումը,

զ. պետական նյութական պահուստի ձևավորման և պահպանման ծախսերի ֆինանսավորման ապահովումը՝ Արցախի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված միջոցներին համապատասխան,



է. պետական պահուստի նյութական արժեքների հետ կապված գործառնությունների մոնիթորինգի իրականացում,

ը. պետական պահուստի նյութական արժեքների առկայության և վիճակի մասին ամփոփ տեղեկատվության ներկայացումը՝ Արցախի Հանրապետության կառավարություն,

թ. համապատասխան ոլորտների աշխատանքները համակարգող՝ Արցախի Հանրապետության պետական մարմինների հետ համատեղ պետական պահուստի նյութական արժեքների պատասխանատու պահպանումն իրականացնող կազմակերպությունների ցանկի մշակումը և այն Արցախի Հանրապետության կառավարության հաստատմանը ներկայացնելը,

ժ. օրենքով սահմանված կարգով համակարգի կազմակերպությունների բյուջետային ֆինանսավորման նպատակային օգտագործման, ինչպես նաև այդ կազմակերպությունների կողմից վճարովի ծառայությունների մատուցման մոնիթորինգի իրականացում.

4) տեխնիկական անվտանգության բնագավառում՝

ա. գիտատեխնիկական առաջադիմության նվաճումների և միջազգային փորձի հիման վրա տեխնիկական անվտանգության կանոնների պահպանման պահանջների սահմանումը,

բ. տեխնիկական անվտանգության կանոնների կատարելագործումը, տնտեսության մեջ աշխատանքների արդյունաբերական անվտանգության ապահովման նկատմամբ պետական վերահսկողության իրականացումը,

գ. աշխատանքների անվտանգ կազմակերպման՝ մեքենասարքավորումների կառուցվածքի, պատրաստման, անվտանգ շահագործման պահանջների սահմանումը.

5) հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության բնագավառում՝

ա. հիդրոօդերևութաբանական գործունեության բնագավառի պետական քաղաքականության ու ռազմավարության մշակումը և դրանց իրականացումը,

բ. հիդրոօդերևութաբանական գործունեության բնագավառի պետական ծրագրերի նկատմամբ մոնիթորինգի իրականացումը,

գ. մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության պետական ծրագրերի մշակում, դրանց կատարման մոնիթորինգի իրականացումը.

6) սեյսմիկ պաշտպանության բնագավառում՝

ա. Արցախի Հանրապետության տարածքում սեյսմիկ ռիսկի նվազեցման բնագավառում տարվող աշխատանքների համակարգումը,

բ. Արցախի Հանրապետության տարածքում և Արցախի Հանրապետության համար վտանգավոր հեռավորության վրա հնարավոր ուժեղ երկրաշարժի կանխատեսման հաստատումը,

գ. հաստատում է Արցախի Հանրապետության տարածքի սեյսմաշրջանացման, դրա՝ խիտ բնակեցված շրջանների, հատուկ, կարևոր և ընդհանուր նշանակության օբյեկտների տարբեր մասշտաբների սեյսմամիկոշրջանացման ու սեյսմիկ ռիսկի քարտեզները և դրանք սահմանված կարգով ներկայացնում Արցախի Հանրապետության քաղաքաշինության նախարարություն՝ կիրարկման համար,

դ. հատուկ, կարևոր և ընդհանուր նշանակության օբյեկտների տարածքների սեյսմիկ ռիսկի փորձագիտական գնահատումների հաստատումը,

է. բարձր սեյսմիկ վտանգի գոտիներում սեյսմիկ ռիսկի նվազեցման նպատակով շենքերի և շինությունների խոցելիության օպերատիվ գնահատման մասնակցությունը,

զ. սեյսմոլոգիայի և բնակչության պաշտպանության աշխատանքների գլխավոր պատվիրատուն է,

է. ներկայացնում է առաջարկություններ ու եզրակացություններ շենքերի և կառույցների խոցելիության նվազեցման ռազմավարական ծրագրերի ու փաստաթղթերի վերաբերյալ,

ը. սեյսմիկ ռիսկի նվազեցման նպատակով՝ իր իրավասության սահմաններում ներկայացնում է առաջարկություններ ու եզրակացություններ քաղաքաշինության, բնակչության տարաբնակեցման, արտադրատնտեսական գործունեության զարգացման և այլ հեռանկարային ծրագրերի վերաբերյալ:

7) օրենքով սահմանված կարգով տնօրինում, տիրապետում և օգտագործում է իրեն հանձնված պետական գույքը:

8) քաղաքացիների նամակների (առաջարկությունների, դիմումների և բողոքների) քննարկման կազմակերպում՝ հասնելով դրանցում բարձրացված հարցերի օրինական լուծմանը և քաղաքացիների նամակներում հաղորդվող ծառայության ստորաբաժանումների գործունեության մեջ տեղ գտած թերությունների վերացում՝ Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

12. Ծառայության առջև դրված խնդիրներն ու գործառույթներն արդյունավետ իրականացնելու նպատակով ծառայության տնօրենին կից ստեղծվում է կոլեգիա, ինչպես նաև կարող է կազմավորվել աշխատանքային խմբեր, հանձնաժողովներ: Ծառայության տնօրենին կից կոլեգիան՝

1) օժանդակում է ծառայության գործունեության ռազմավարական պլանավորման, քաղաքական որոշումների ընդունման, միջոցառումների ծրագրերի մշակման գործընթացներին:

2) նպաստում է ռազմավարական ծրագրերի իրականացմանը, գնահատմանը և այդ գործընթացներին քաղաքացիական հասարակության մասնակցությանը:

3) մշակում և ներկայացնում է ծառայության կառավարման արդյունավետության բարձրացման վերաբերյալ առաջարկություններ:

13. Ծառայության տնօրենին կից կոլեգիայի աշխատակարգը սահմանում է ծառայության տնօրենը:

### **III. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ**

14. Ծառայությունը կառավարում է ծառայության տնօրենը, որին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Արցախի Հանրապետության կառավարությունը: Ծառայության տնօրենն ունի տեղակալ(ներ), որին(որոնց) պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Արցախի Հանրապետության կառավարությունը՝ ծառայության տնօրենի ներկայացմամբ: Ծառայության տնօրենն իր գործունեությունն իրականացնում է միանձնյա ղեկավարման սկզբունքով և պատասխանատու է ծառայությանն առաջադրված խնդիրների իրականացման համար: Ծառայության տնօրենն իր գործունեության ընթացքում առաջնորդվում է Արցախի Հանրապետության օրենսդրությամբ, Արցախի Հանրապետության միջազգային պայմանագրերով և այլ իրավական ակտերով:

15. Ծառայության տնօրենն իրականացնում է ծառայությանը վերապահված խնդիրներն ու գործառույթները և պատասխանատու է լիազորված բնագավառներում քաղաքականության մշակման ու իրականացման, տիրող իրավիճակի և հեռանկարային զարգացման ծրագրերի ապահովման համար:

16. Ծառայության տնօրենը հաշվետու է Արցախի Հանրապետության Նախագահին:

17. Ծառայության տնօրենը՝

1) ի պաշտոնե հանդիսանում է Արցախի Հանրապետության քաղաքացիական պաշտպանության պետի տեղակալը:

2) ղեկավարում է ծառայության գործունեությունը, ղեկավարում, համակարգում և վերահսկում է ծառայության համակարգի մեջ մտնող կազմակերպությունների ընթացիկ գործունեությունը, պատասխանատու է ծառայության առջև դրված խնդիրների ու գործառույթների իրականացման համար:

3) Արցախի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ կառավարության հաստատմանն է ներկայացնում ծառայության համակարգի մեջ մտնող կազմակերպությունների կանոնադրությունները և կառուցվածքները.

4) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված գործունեության բնագավառների, նպատակների ու խնդիրների վերաբերյալ համապատասխան առաջարկություններ է ներկայացնում Արցախի Հանրապետության Նախագահին և կառավարություն.

5) իր իրավասության սահմաններում ընդունում և օրենքով սահմանված կարգով հրապարակում է գերատեսչական իրավական ակտեր, արձակում է հրամաններ և տալիս ցուցումներ, առանց լիազորագրի հանդես է գալիս Արցախի Հանրապետության կամ ծառայության անունից, ինչպես նաև տալիս է Արցախի Հանրապետության կամ ծառայության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ նաև վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

6) «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված կարգով Արցախի Հանրապետության քաղաքացիներին ընդունում է փրկարարական ծառայության, նշանակում է պաշտոնի և ազատում պաշտոնից.

7) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի համաձայն Արցախի Հանրապետության քաղաքացիներին ընդունում է քաղաքացիական աշխատանքի, նշանակում է պաշտոնի և ազատում պաշտոնից.

8) ծառայության համակարգի փրկարարական և քաղաքացիական անձնակազմին ներկայացնում է պետական պարգևների.

9) Արցախի Հանրապետության օրենսդրությանը և սույն կանոնադրությանը համապատասխան որոշում է ծառայության կառուցվածքային ստորաբաժանումների իրավասության սահմանները.

10) կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալների և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների միջև.

11) օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված իր լիազորությունների սահմաններում կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում ծառայության կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարների, ինչպես նաև ծառայության ենթակայությանը հանձնված պետական ոչ առևտրային կազմակերպությունների՝ Արցախի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, հանձնարարագրերը, կարգադրությունները և ցուցումները.

12) լսում և Արցախի Հանրապետության կառավարության հաստատմանն է ներկայացնում ծառայության և ծառայության համակարգի մեջ մտնող կազմակերպությունների գործունեության մասին տարեկան հաշվետվություններն ու տարեկան հաշվեկշիռները, քննում է դրանց գործունեության ստուգման արդյունքները, հաստատում ծառայության և ծառայության մարմինների տարեկան պահպանման ծախսերի նախահաշիվները, դրանց կատարողականները և ֆինանսական հաշվետվությունների արժանահավատության վերստուգման արդյունքները.

13) վերահսկողություն է իրականացնում ծառայության կողմից պետական գույքի տնօրինման, տիրապետման և օգտագործման նկատմամբ.

14) Արցախի Հանրապետության կառավարության հաստատմանն է ներկայացնում ծառայության կանոնադրությունը, կառուցվածքը և համակարգի աշխատողների թիվը.

15) ստեղծում է խորհրդակցման մարմիններ.

16) սահմանված կարգով կազմավորում և վերակազմավորում է ծառայության ստորաբաժանումները, Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով համալրում է ծառայության անձնակազմը, իրականացնում նյութատեխնիկական, ֆինանսական, կադրային և այլ ապահովում.

17) հաստատում է ծառայության կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների կանոնադրությունները.

18) արձակում է հրամաններ (անհրաժեշտության դեպքում գործադիր իշխանության այլ մարմինների հետ համատեղ), հաստատում կանոնադրություններ, հրահանգներ, կանոնակարգեր և այլ նորմատիվ փաստաթղթեր և ստուգում դրանց կատարումը.

19) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է ծառայության համակարգի աշխատողներին, ինչպես նաև նրանց նկատմամբ կիրառում է խրախուսանքի և կարգապահական տույժի միջոցներ.

20) սահմանում է Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայության մեղալիներ, կրճքանշաններ և պատվոգրեր, ինչպես նաև հաստատում է դրանց շնորհման կարգը և ձևերը.

21) Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայության ծառայողներին պարգևատրում է մեղալիներով, կրճքանշաններով և պատվոգրերով, իսկ Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայության քաղաքացիական աշխատանք կատարողներին, տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց և քաղաքացիներին՝ մեղալիներով ու պատվոգրերով.

22) իրականացնում է Արցախի Հանրապետության օրենսդրությամբ, Արցախի Հանրապետության միջազգային պայմանագրերով և այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

18. Ծառայության տնօրենի բացակայության դեպքում, նրա հանձնարարությամբ, ծառայության տնօրենի պարտականությունները կատարում է ծառայության տնօրենի տեղակալներից մեկը:

19. Ծառայության տնօրենի տեղակալը՝

1) համակարգում է ծառայության համակարգի աշխատանքները՝ ծառայությանը վերապահված քաղաքականության իրականացման իրեն հանձնարարված բնագավառներում.

2) իր լիազորության սահմաններում համակարգում է ծառայության՝ իրեն հանձնարարված բնագավառներում քաղաքականության ապահովման համար անհրաժեշտ աշխատանքների իրականացումը՝ ծառայության կառուցվածքային ստորաբաժանումների և ծառայության կառավարման ոլորտում գործող կազմակերպությունների միջոցով՝ տալով ցուցումներ ու հանձնարարականներ.

3) ծառայության նպատակներին և խնդիրներին համապատասխան՝ իրականացնում է իրեն հանձնարարված բնագավառների ծառայության համակարգի մարմիններին որոշակի հանձնարարականների և առաջադրանքների սահմանում, դրանց կատարման նկատմամբ վերահսկողություն.

4) ծառայության տնօրենի հանձնարարությամբ իրականացնում է ծառայության տնօրենի մոտ քննարկվելիք հարցերի նախնական քննարկումները.

5) համակարգում է իրեն հանձնարարված բնագավառներում ծառայության համակարգի մարմինների կողմից իրականացվող աշխատանքների մասնագիտական ուսումնասիրությունները և աշխատանքների ընթացքի օպերատիվ վերլուծությունը.

6) իր լիազորության սահմաններում համագործակցում է պետական կառավարման և այլ մարմինների, կազմակերպությունների և հիմնարկների հետ.

7) իրեն հանձնարարված բնագավառներում համակարգում է համապատասխան զարգացման ծրագրերի մշակման և իրականացման աշխատանքները.

8) պարբերաբար ծառայության տնօրենին է ներկայացնում տեղեկատվություն իրեն հանձնարարված բնագավառներում տիրող իրավիճակի մասին.

9) ապահովում է իրեն հանձնարարված բնագավառներում ծառայության տնօրենի հրամանների և ցուցումների կատարման նկատմամբ վերահսկողությունը և արդյունքների մասին տեղեկացում ծառայության տնօրենին.

10) ծառայության տնօրենին ներկայացնում է առաջարկություններ իր իրավասությանը վերաբերող հարցերի մասին.

11) ծառայության տնօրենի հանձնարարությամբ իրականացնում է Արցախի Հանրապետության օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով նախատեսված այլ լիազորություններ:

#### **IV. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ**

20. Ծառայության գույքն օրենքով սահմանված կարգով ձևավորվում է Արցախի Հանրապետության կառավարության կողմից, ինչպես նաև Արցախի Հանրապետության անունից կնքված գործարքներով ձեռք բերված և ծառայության տնօրինմանը, տիրապետմանը և օգտագործմանը հանձնված (ամրացված) գույքից (ներառյալ գույքային իրավունքները), որը հաշվառվում է նրա հաշվեկշռում:

Արցախի Հանրապետության կառավարության որոշմամբ ծառայությանը կարող է վերապահվել նաև պետական բաժնետոմսերի տիրապետման իրավասություն:

21. Արցախի Հանրապետության կառավարությունն իրավունք ունի ցանկացած ժամանակ հետ վերցնելու ծառայության գույքը:

22. Ծառայությունն իրավունք ունի օրենքով, այլ իրավական ակտերով ու իր կանոնադրությամբ նախատեսված դեպքերում և կարգով իր գործունեության նպատակներին ու գույքի նշանակությանը համապատասխան տնօրինելու, տիրապետելու և օգտագործելու իր գույքը:

#### **V. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ**

23. Ծառայության կառուցվածքը ներառում է ծառայության գործունեությունն ապահովող կառուցվածքային, տարածքային և առանձնացված ստորաբաժանումներ: Ծառայության խնդիրների և գործառույթների իրականացման ապահովման նպատակով Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է ծառայության ենթակայությանը հանձնվել պետական ոչ առևտրային կազմակերպություններ:

24. Ծառայության կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների կանոնադրությունները հաստատում է ծառայության տնօրենը:

#### **VI. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

25. Ծառայության ֆինանսավորումն իրականացվում է ծառայության գլխավոր ֆինանսիստի միջոցով: Ծառայության գլխավոր ֆինանսիստը ղեկավարում է ծառայության ֆինանսական և հաշվապահական ծառայությունները, գործում ծառայության տնօրենի անմիջական ենթակայությամբ և իրականացնում «Գանձապետական համակարգի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով իրեն վերապահված լիազորությունները:

26. Ծառայության գլխավոր ֆինանսիստը պատասխանատու է հաշվապահական հաշվառումը վարելու, ծառայության ֆինանսական, բյուջետային, հարկային, վիճակագրական, պարտադիր վճարների հաշվետվությունները ժամանակին կազմելու համար:

27. Ծառայությունն Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վարում է հաշվապահական հաշվառում և համապատասխան մարմիններ ներկայացնում ֆինանսական, հարկային, պարտադիր վճարների և վիճակագրական հաշվետվություններ, հաշվարկներ, հայտարարագրեր:

28. Ծառայության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի (վերստուգման)՝ Արցախի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ  
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

**Ա. ԼԱԶԱՐՅԱՆ**

**Կ Ա Ռ ՈՒ Ց Վ Ա Ծ Ք**  
**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ**  
**ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ**

**I. Կառուցվածքային ստորաբաժանումներ**

1. Քաղաքացիական պաշտպանության և աղետների հետևանքների վերացման շտաբ
2. Քաղաքացիական պաշտպանության վարչություն
3. Փրկարար ուժերի վարչություն
4. Նյութատեխնիկական ապահովման և պետական ռեզերվների վարչություն
5. Տնօրենի աշխատակազմ
6. Կադրերի բաժին
7. Ֆինանսատնտեսագիտական և սոցիալական ապահովման բաժին
8. Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին

**II. Տարածքային ստորաբաժանումներ**

1. Ստեփանակերտ քաղաքի արտակարգ իրավիճակների բաժին
2. Ասկերանի շրջանային արտակարգ իրավիճակների բաժին
3. Մարտակերտի շրջանային արտակարգ իրավիճակների բաժին
4. Մարտունու շրջանային արտակարգ իրավիճակների բաժին
5. Հադրութի շրջանային արտակարգ իրավիճակների բաժին
6. Շուշիի շրջանային արտակարգ իրավիճակների բաժին
7. Քաշաթաղի շրջանային արտակարգ իրավիճակների բաժին
8. Շահումյանի շրջանային արտակարգ իրավիճակների բաժին

**III. Առանձնացված ստորաբաժանումներ**

1. Պետական հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչություն:

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ**  
**ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ**  
**ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

**Ա. ԼԱԶԱՐՅԱՆ**

**ԹԻՎ**  
**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ**  
**ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ**

1. Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայության աշխատողների թիվը սահմանել 475 միավոր, այդ թվում՝
- 1) փրկարարական ծառայության աշխատողներ (պաշտոններ) - 407 միավոր,
  - 2) քաղաքացիական աշխատանք կատարողներ - 68 միավոր:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ**  
**ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ**  
**ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

**Ա. ԼԱԶԱՐՅԱՆ**



ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

7 փետրվարի 2018թ.

N 74-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 24-Ի N 34 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին և Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-103-Ն հրամանագրին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **առաջում է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 24-ի «Ամենամյա դրամական օգնության մասին» N 34 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) որոշման 1-ին կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շքանշանակիրների,» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության շքանշանակիրների, զոհված՝ հետմահու «Մարտական խաչ» 1-ին և (կամ) 2-րդ աստիճանի շքանշանով պարգևատրված անձանց ընտանիքների,» բառերով.

2) որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի՝

ա. 2-րդ կետի 10-րդ ենթակետում, 5-րդ կետի 5-րդ ենթակետում, 14-րդ կետի 12-րդ ենթակետում «ԼՂՀ» հապավումը փոխարինել «Արցախի Հանրապետության» բառերով,

բ. 2-րդ կետի 10-րդ ենթակետում, 3-րդ կետի «համար» բառից հետո, 4-րդ կետի «գումարները» բառից հետո, 5-րդ կետի «հաշվառման» բառից առաջ, 6-րդ կետի 2-րդ պարբերությունում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն» բառերը և դրանց հոլովածները փոխարինել «Արցախի Հանրապետություն» բառերով և դրանց հոլովածներով,

գ. 2-րդ կետում լրացնել հետևյալ բովանդակությամբ 10.1-ին ենթակետ.

«10.1) զոհված՝ հետմահու «Մարտական խաչ» 1-ին և (կամ) 2-րդ աստիճանի շքանշանով պարգևատրված անձանց ընտանիքներ՝ Արցախի Հանրապետության պաշտպանության ժամանակ, ինչպես նաև ծառայողական կամ պաշտոնեական պարտականությունները կատարելիս զոհված՝ (մահացած) հետմահու «Մարտական խաչ» 1-ին և (կամ) 2-րդ աստիճանի շքանշանով պարգևատրված անձանց ընտանիքների անդամներ՝ ծնող(ներ), ամուսին, 18 տարին չլրացած երեխան (ուսումնական հաստատությունում առկա (ցերեկային) ուսուցմամբ սովորելու դեպքում՝ մինչև ուսումնական հաստատությունն ավարտելը, բայց մինչև իր 23 տարին լրանալը), 18 տարեկան և դրանից բարձր տարիքի հաշմանդամ զավակը, եթե նա հաշմանդամ է ճանաչվել մինչև իր 18 տարին լրանալը և ունի աշխատանքային

գործունեությամբ զբաղվելու կարողության 3-րդ աստիճանի սահմանափակում),»

դ. 3-4-րդ կետերում «Լեոնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման» բառերով,

ե. 5-րդ կետում լրացնել հետևյալ բովանդակությամբ 5.1-ին ենթակետ.

«5.1) զոհված՝ հետմահու «Մարտական խաչ» 1-ին և (կամ) 2-րդ աստիճանի շքանշանով պարգևատրված անձանց ընտանիքների անդամները՝ զոհված՝ հետմահու «Մարտական խաչ» 1-ին և (կամ) 2-րդ աստիճանի շքանշանով պարգևատրելու մասին Արցախի Հանրապետության Նախագահի հրամանագիրը կամ համապատասխան վկայականը, ամուսնության վկայականը՝ ամուսնու համար, զոհված՝ հետմահու «Մարտական խաչ» 1-ին և (կամ) 2-րդ աստիճանի շքանշանով պարգևատրված անձի ծննդյան վկայականը՝ ծնողի համար, երեխայի ծննդյան վկայականը և երեխայի ծնողների ամուսնության վկայականը (կամ հայրության ճանաչման վկայականը)՝ երեխայի համար, ըստ անհրաժեշտության՝ առկա (ցերեկային) ուսուցմամբ սովորելը հաստատող փաստաթուղթը, հաշմանդամ ճանաչելու մասին բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնի տված տեղեկանքը, ինչպես նաև 18 տարին չլրացած երեխայի օրինական ներկայացուցիչը՝ ծնողը, խնամակալը, որդեգրողը, դատարանի վճռով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձի խնամակալը հանդիսանալը հաստատող փաստաթղթեր»,»

զ. 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Սույն կարգով սահմանված երկու և ավելի դրամական օգնության իրավունք ունեցող քաղաքացուն իր ընտրությամբ նշանակվում է մեկ դրամական օգնություն:

Զոհված՝ հետմահու «Մարտական խաչ» 1-ին և (կամ) 2-րդ աստիճանի շքանշանով պարգևատրված անձի ընտանիքում դրամական օգնություն ստանալու իրավունք ունեցող երկու և ավելի անձանց դեպքում դրամական օգնություն նշանակվում է ընտանիքի՝ չափահաս անդամներից մեկին՝ ընտանիքի բոլոր անդամների համար: Ընտանիքի՝ դրամական օգնության իրավունք ունեցող անդամի պահանջով նրա բաժնեմասն առանձնացվում է: Այս դեպքում ընտանիքի անդամի դրամական օգնության բաժնեմասը հաշվարկվում է դրամական օգնության գումարն ընտանիքի՝ դրամական օգնության իրավունք ունեցող անդամների թվի վրա բաժանելու միջոցով: Դրամական օգնության առանձնացված բաժնեմասը վճարվում է դիմելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից: 18 տարին չլրացած երեխային դրամական օգնություն նշանակելու (դրամական օգնության բաժնեմասն առանձին վճարելու) մասին դիմում ներկայացնում է նրա օրինական ներկայացուցիչը՝ ծնողը, խնամակալը, որդեգրողը, դատարանի վճռով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձի դեպքում՝ խնամակալը:

Եթե ընտանիքը բաղկացած է միայն 63 տարին լրացած՝ զավակ կամ խնամակալ չունեցող և չաշխատող ամուսիններից՝ դրամական օգնություն է նշանակվում և վճարվում նրանցից յուրաքանչյուրին՝ որպես միայնակ քաղաքացիների:

Միայնակ քաղաքացուն դրամական օգնություն նշանակելու համար կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը, հիմք ընդունելով Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հարկային մարմնի կողմից տրամադրվող եկամտային հարկի անձնավորված հաշվառման տեղեկատվական բազայի տվյալները, ճշտում է անձի չաշխատելու փաստը, կազմում համապատասխան տեղեկանք և կցում նրա դրամական օգնության գործին (փաստաթղթերին):»:

Է. 14-րդ կետում լրացնել հետևյալ բովանդակությամբ 12.1-ին ենթակետ.

«12.1) Ձոհված՝ հետմահու «Մարտական խաչ» 1-ին և (կամ) 2-րդ աստիճանի շքանշանով պարգևատրված անձանց ընտանիքներին՝ 9 400 դրամ,»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, իսկ դրա գործողությունը տարածվում է 2018 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

Սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի, 2-րդ ենթակետի «գ», «ե» պարբերությունների, «գ» պարբերության 2-րդ պարբերության, «է» պարբերության գործողությունը տարածվում է նաև մինչև 2018 թվականի հունվարի 1-ը գոհված՝ հետմահու «Մարտական խաչ» 1-ին և (կամ) 2-րդ աստիճանի շքանշանով պարգևատրված անձանց ընտանիքների վրա:

Մինչև 2018 թվականի հունվարի 1-ը գոհված՝ հետմահու «Մարտական խաչ» 1-ին և (կամ) 2-րդ աստիճանի շքանշանով պարգևատրված անձանց ընտանիքներին դրամական օգնություն է նշանակվում 2018 թվականի հունվարի 1-ից՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից երեք ամսվա ընթացքում դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարության սոցիալական ապահովության պետական գործակալության կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում ներկայացնելու դեպքում, իսկ այդ ժամկետից հետո ներկայացնելու դեպքում՝ դիմելու օրվանից:

**«Հաստատում եմ»**

**ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ**

**Բ. ՍԱՀԱԿՅԱՆ**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

7 փետրվարի 2018թ.

N 75-Ն

ք.Ստեփանակերտ

**ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԸ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ա թ ա շ ու մ է**:

1. 2018 թվականի մարտի 9-ի աշխատանքային օրը տեղափոխել 2018 թվականի մարտի 17-ը՝ շաբաթ օրը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**«Հաստատում եմ»**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ**

**Բ. ՄԱՀԱԿՅԱՆ**

**ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

9 փետրվարի 2018թ.

N 91-Ն

ք.Ստեփանակերտ

**ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ  
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 1-ի N 589 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Բերքաձորի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում՝ համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող՝ անտառային նպատակային նշանակության 0,117 հեկտար թփուտը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

**Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

9 փետրվարի 2018թ.

N 92-Ն

ք.Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ  
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **նրոշում է**:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 1-ի N 593 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Նախիջևանիկի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում՝ համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող՝ անտառային նպատակային նշանակության 6,8 հեկտար թփուտը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության՝ ընդերքի օգտագործման հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

9 փետրվարի 2018թ.

N 93-Ն

ք.Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ  
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ն ր ն շ ու մ է**:

1. Արցախի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքի վարչական սահմաններում՝ Ստեփանակերտ քաղաքի Նաբերեժնայա 3-րդ նրբանցք թիվ 14 հասցեում գտնվող, Ապագա Սերունդների հիմնադրամին սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի նպատակային նշանակության 0,1632 հեկտար հասարակական կառուցապատման հողը, համաձայն հավելվածի, փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության՝ արդյունաբերական օբյեկտների հողերի:

2. Առաջարկել Ստեփանակերտի քաղաքապետին՝ ապահովել հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերության գանձումը, եթե հողամասի նպատակային նշանակության փոփոխումից հետո դրա կադաստրային արժեքն ավելի բարձր է, քան մինչև փոփոխումը:

3. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

9 փետրվարի 2018թ.

N 96-Ն

ք.Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ  
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ն ր ո շ ու մ է**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի մարտի 4-ի N 163 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի Մատաղիսի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում՝ համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող՝

1) պետական սեփականություն հանդիսացող՝ անտառային նպատակային նշանակության 0,2202 հեկտար թփուտը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ հասարակական կառուցապատման հողերի.

2) համայնքային սեփականություն հանդիսացող՝ գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,1118 հեկտար այլ հողատեսքերը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ հասարակական կառուցապատման հողերի.

3) պետական սեփականություն հանդիսացող՝ անտառային նպատակային նշանակության 10,05166 հեկտար թփուտը փոխադրել ջրային նպատակային նշանակության՝ ջրամբարների հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 փետրվարի 2018թ.

N 98-Ն

ք.Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՖՈՆԴԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ  
ՏԱՐԵԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Արցախի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասով և Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ա ղ ո շ ու մ է.**

1. Հաստատել Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարության զարգացման ֆոնդի գումարների օգտագործման ուղղությունները՝ 2018 թվականի տարեկան ծախսերի նախահաշվի ձևով՝ համաձայն հավելվածի:

2. Թույլատրել Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարին՝ անհրաժեշտության դեպքում՝

1) սույն որոշման 1-ին կետով հաստատված նախահաշվում կատարել վերաբաշխում ծախսերի տնտեսագիտական դասակարգմամբ նախատեսված հոդվածների միջև, բայց ոչ ավելի, քան համապատասխան նախահաշվով հաստատված հատկացումների ընդհանուր ծավալի 15 տոկոսը.

2) սույն որոշման 1-ին կետով հաստատված համապատասխան նախահաշվով նախատեսված ծախսերի տարեկան ընդհանուր գումարը 2018 թվականի ընթացքում գերազանցող մուտքերի առկայության դեպքում, 2018 թվականին դրանք օգտագործել:

3. Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարին՝ մեկամսյա ժամկետում հաստատել սույն որոշման 1-ին կետով հաստատված նախահաշվով նախատեսված հատկացումների եռամսյակային բաշխումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2018 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**Ն Ա Խ Ա Հ Ա Շ Ի Վ**  
**ԱՐՑԱՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ՀԱՄԱԿԱՐԳԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՖՈՆԴԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ  
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազար դրամ)

	<b>Ընդամենը</b>
<b>ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ</b>	<b>76 399.9</b>
այդ թվում՝	
<b>Ա. ԸՆԹԱՑԻՎ ԾԱԽՍԵՐ</b>	<b>59 399.9</b>
այդ թվում՝	
<b>1. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ</b>	<b>40 164.7</b>
այդ թվում՝	
<b>1.1 ԴՐԱՄՈՎ ՎՃԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԵՐ ԵՎ ՀԱՎԵԼԱՎՃԱՐՆԵՐ</b>	
այդ թվում՝	
Աշխատողների աշխատավարձեր և հավելյալ ձևեր	
Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	40 164.7
այդ թվում՝	
<i>Պարգևատրման ֆոնդ</i>	<i>32 609.2</i>
<i>Նախարարի պահուստային ֆոնդ</i>	<i>7555.5</i>
<b>2. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՈՔԲԵՐՈՒՄ</b>	<b>19 235.2</b>
այդ թվում՝	
<b>2.1 ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ</b>	
Էներգետիկ ծառայություններ	
Կոմունալ ծառայություններ	
Կապի ծառայություններ	
Գույքի և սարքավորումների վարձակալություն	
<b>2.2 ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՇՐՋԱԳԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱԽՍԵՐ</b>	<b>3 000.0</b>
Արտասահմանյան գործուղումների զծով ծախսեր	3 000.0
<b>2.3 ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՈՔ ԲԵՐՈՒՄ</b>	<b>1 000.0</b>
Վարչական ծառայություններ	
Համակարգչային ծառայություններ	
Տեղեկատվական ծառայություններ	
Ներկայացուցչական ծախսեր	1 000.0
Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	
<b>2.4 ԸՆԹԱՑԻՎ ՆՈՐՈԳՈՒՄ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄ (ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՆՅՈՒԹԵՐ)</b>	<b>11 235.2</b>
Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	11 235.2
Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	
<b>2.5 ՆՅՈՒԹԵՐ (ԱՊՐԱՆՔՆԵՐ)</b>	<b>4 000.0</b>
Գրասենյակային նյութեր և հագուստ	
Տրանսպորտային նյութեր	
Կենցաղային և հանրային սննդի նյութեր	
Հատուկ նպատակային այլ նյութեր	4 000.0
<b>3. ԱՅԼ ԾԱԽՍԵՐ</b>	<b>1 000.0</b>
Այլ ծախսեր	1 000.0
<b>Բ. ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՎՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ</b>	<b>16 000.0</b>
<b>ՄԵՔԵՆԱՆԵՐ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ</b>	<b>16 000.0</b>
Տրանսպորտային սարքավորումներ	10 000.0
Վարչական սարքավորումներ	6 000.0
Ոչ նյութական հիմնական միջոցներ	

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ  
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 փետրվարի 2018թ.

N 100-Ն

ք.Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՑԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ  
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Արցախի Հանրապետության Շահումյանի շրջանի Ծարի գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող՝ գյուղատնտեսական նպատակային նշանակության 4,9194 հեկտար արոտավայրը, համաձայն հավելվածի, փոխադրել էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների նպատակային նշանակության՝ էներգետիկայի օբյեկտների հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

12 փետրվարի 2018թ.

N 101-Ն

ք.Ստեփանակերտ

**ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ  
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Արցախի Հանրապետության Շահումյանի շրջանի համայնքների վարչական սահմաններից դուրս, շրջանի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող՝ գյուղատնտեսական նպատակային նշանակության 16,4432 հեկտար արոտավայրը, համաձայն հավելվածի, փոխադրել էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների նպատակային նշանակության՝ էներգետիկայի օբյեկտների հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**«Հաստատում եմ»**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

**Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

14 փետրվարի 2018թ.

N 104-Ն

ք.Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 1-Ի N 209-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո թ ո շ ու մ է**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 1-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական անտառային ֆոնդում արմատի վրա բնափայտի բացթողման նվազագույն գները սահմանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2013 թվականի փետրվարի 14-ի N 44-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 209-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

- 1) որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել.
- 2) որոշմամբ հաստատված հավելվածի աղյուսակը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«

(ղրամ)

Հ/Հ	Ծառատեսակների անվանումը	խտացված խորանարդ մետրերով					
		Ներքին շուկայի համար			Արտահանման համար		
		Խոշոր տրամագիծը 25սմ և ավելի	Միջին տրամագիծը 13սմ մինչև 25 սմ	Փոքր տրամագիծը մինչև 13սմ	Խոշոր տրամագիծը 25սմ և ավելի	Միջին տրամագիծը 13սմ մինչև 25 սմ	Փոքր տրամագիծը մինչև 13սմ
1	2	3	4	5	6	7	8
1.	Գործափայտ						
1)	Հաճարենի	18000	15000	12000	22000	19000	16000
2)	Կաղնի, Հացենի, Լորենի	30000	26000	22000	36000	32000	28000
3)	Բոխի	7000	5000	3000	9000	7000	5000
2.	Վառելափայտ						
1)	Ինքնամթերում (թափուկից)		240			6435	
2)	Ինքնամթերում (արմատի վրա)		2145			6435	

:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**«Հաստատում եմ»**

**ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

**Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 փետրվարի 2018թ.

N 105-Ն

ք.Ստեփանակերտ

2018 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ԲՆԱՓԱՅՏԻ ՄԹԵՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ  
ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՏԱՏԵՂԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անտառային օրենսգրքի 6-րդ հոդվածի «գ» կետը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **առաջադրվում է**.

1. Հաստատել 2018 թվականի համար բնափայտի մթերման տարեկան հաշվարկային հատատեղը ըստ ծառատեսակների՝ համաձայն հավելվածի:

2. Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարությանը՝ պահանջարկի դեպքում թույլատրել սույն որոշմամբ հաստատված ծավալները 2019 թվականի հաշվարկային հատատեղի հաշվին գործափայտի մասով ավելացնել մինչև 15 տոկոսի չափով, վառելափայտի մասով՝ 20 տոկոսի չափով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



**2018 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ԲՆԱՓԱՅՏԻ ՄԹԵՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ  
ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՏԱՏԵՂԸ**

(ամբողջ ծավալը ցույց է տրված խտացված խորանարդ մետրերով)

Հ/Հ	Հատման տեսակը	Ընդհանուր ծավալը	Այդ թվում՝ գործափայտ						Այդ թվում՝ վառելավայրտ
			Ընդհանուր ծավալը	Ըստ ծառատեսակների					
				Կավի	Հաճարենի	Հացենի	Լորենի	Բոխի	
1	Անտառվերականգնման հատում	87 380	7380	700	4500	100	80	2000	80 000
	<b>Ընդամենը</b>	<b>87 380</b>	<b>7380</b>	<b>700</b>	<b>4500</b>	<b>100</b>	<b>80</b>	<b>2000</b>	<b>80 000</b>

ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ  
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 փետրվարի 2018թ.

N 109-Ն

ք.Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՐՏԱԴՐՎՈՂ ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿՈՎ  
ՀԱՐԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔԻ ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ  
ՀԱՄԱՐ «2018» ԹՎԱԳՐՄԱՍԲ ԱԿՑԻԶԱՅԻՆ ԴՐՈՇՄԱՆԻՇՆԵՐԸ  
ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ակցիզային հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի  
Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասը և ղեկավարվելով  
Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի  
ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի  
Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է**:

1. 2018 թվականի փետրվարի 16-ից կիրառության մեջ դնել Արցախի  
Հանրապետությունում արտադրվող ակցիզային հարկով հարկման ենթակա  
ալկոհոլային խմիչքի դրոշմավորման համար «2018» թվագրմամբ ակցիզային  
դրոշմանիշները:

2. Սույն դրոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը  
հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

15 փետրվարի 2018թ.

N 110-Ն

ք.Ստեփանակերտ

**«ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՎ ՊԱՐՏԱԴԻՐ ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ  
ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ «Ե» ՍԵՐԻԱՅԻ ԴՐՈՇՄԱՊԻՏԱԿՆԵՐԸ  
ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Առևտրի և ծառայությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 9.5-րդ հոդվածի 4-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ռ ր ո շ ու մ է**.

1. «Առևտրի և ծառայությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքների դրոշմավորման համար 2018 թվականի փետրվարի 16-ից կիրառության մեջ դնել «Ե» սերիայի դրոշմապիտակները:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**«Հաստատում եմ»**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**